ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Մուրադյանի (պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 271.110.967074)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրության հիման վրա, 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Կանտասուվ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կանտասուվ» ՍՊԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կանտասուվ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով մրցույթի շրջանակներում գնումների քարտուղարը զանգահարել և այդ մասին հայտնել է ավելին քան մեկ շաբաթ անց, երբ արդեն որոշվել էր Ընկերության հայտը մերժել:

Գնումների քարտուղարը ուշ կատարված զանգը բացատրեց Ընկերության հեռախոսահամարը չգտնելու պատճառաբանությամբ, սակայն նախկին երկու տարվա ընթացքում Ընկերության կողմից մասնակցած մրցույթների շրջանակներում բոլոր պատվիրատուները ըստ անհրաժեշտության, չեն զլացել, Ընկերության հետ կապ են հաստատել (Ընկերության հեռախոսահամարը սահմանված կարգով գրանցված է armeps.am կայքում), ընդ որում նաև փաստաթղթեր շտկելու կամ ընթացակարգային այլ փաստաթղթեր ներկայացնելու համար: Նաև գնումների պատասխանատուների կողմից եղել են նախազգուշական զանգեր, առանձին փուլերի ժամկետների նկատմամբ Ընկերության ուշադրությունը հրավիրելու համար: Ընկերությունը գտնում է, որ պետական և մասնավոր հատվածի հենց այդպիսի համագործակցությունն է բերում դրական արդյունքների: ՊԵԿ գնումների պատասխանատուների գործողություններին Ընկերությունը չի ուզում գնահատական տալ, սակայն խնդրում է ընթացակարգի շրջանակներում սահմանված կարգով հաշվի առնել նաև զարգացող ընկերության կողմից հետագայում պետական կարիքների բավարարմանն ուղղված օգտակարության գործակիցը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ նամակների չստացման տեխնիկական խնդիրները պարզաբանելու համար «Կանտասուվ» ՍՊԸ-ն դիմել է Armeps և gmail support team կայքերի աջակցության՝ խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում տվյալ ու օգնություն տրամադրել նշված հարցում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված մեկ այլ գրությամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ն հայտնել է, որ նամակների չստացման տեխնիկական խնդիրները

պարզաբանելու համար armeps.am կայքի մասով Ընկերության գրավոր հարցմանն ի պատասխան ստացվել է բանավոր պարզաբանում, որ տեխնիկական տվյալներ և/կամ պարզաբանումներ ըստ անհրաժեշտության կարող են տրամադրվել միայն բողոքներ քննող պետական կառույցին՝ նրա հարցմանն ի պատասխան: Gmail էլեկտրոնային փոստի admin կառավարման համակարգի պատասխանուտներից գրավոր նամակ Ընկերությունը չի ստացել, սակայն դիմելով ծրագրավորող փորձագետի, նրա օգնությամբ gmail համակարգի սպասարկման կանոններին համապատասխան ներկայացնում են «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՓԲ-19/14» տառերի ու թվերի համադրությամբ gmail համակարգի պատմության մեջ ստացված և ուղարկված նամակները: Քանի որ, ըստ Ընկերության փորձագետի, gmail համակարգը հանդիսանում է համաշխարհային անվճար ծառայություն, հետևաբար նրա առանձին օգտատերերին հասանելի չեն այլ կայքերի ու սերվերների հետ միջշարժային ճանապարհային տեխնիկական տվյալները: Այդ իսկ պատճառով Ընկերությունը ներկայացնում է միայն վերջինիս ինտերֆեյսով հասանելի տեղեկատվության բացակայությունը: Ընկերությունը խնդրել է նշված գործընթացի շրջանակներում այլ տեխնիկական տվյալների անհրաժեշտության դեպքում armeps.am կայքից տեխնիկական տեղեկատվություն ստանալու և վերծանելու ժամանակ ներգրավել նաև Ընկերության կողմից առաջարկված փորձագետին: Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ առանձին դեպքերում էլեկտրոնային նամակները կարող են հասցեատիրոջը չհասնել նաև կողմերից անկախ պատճառներով, օրինակ՝ հակավիրուսային ծրագրերի կողմից նշված նամակների ճանապարհին կամ վերջնակետից առաջ ջնջելու պատճառով:

«Կանտասուվ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/36 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով

գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակում «Կանտասուվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի (հետայսու նաև՝ Կարգի) 05.04.2019թ. Ընկերությանը ծանուցվել են ներկայացնել հայտերի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/36 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կանտասուվ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում չափաբաժինները սխալ են լրացված:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգի միջոցով 05.04.2019թ. ծանուցել է «Կանտասուվ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.04.2019թ. թիվ /18-2/13122-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե

մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կանտասուվ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում չափաբաժինները սխալ են լրացված:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգի միջոցով 05.04.2019թ. ծանուցել է «Կանտասուվ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ «Կանտասուվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում նշվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնում է Ընթացակարգի 10-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների համար, մինչդեռ Ընկերության գնային առաջարկը ներկայացվել է 13-րդ և 40-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 05.04.2019թ. ծանուցվել է հայտի թիվ 1 հավելվածում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը սակայն Ընկերության սահմանված ժամկետում չի շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Կանտասուվ» ՍՊԸ-ն «ՀՀՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի թիվ 1 հավելվածի շտկված տարբերակը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6969-2019 գրությամբ «Կանտասուվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կանտասուվ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**